BREVET DE TECHNICIEN SUPÉRIEUR

SESSION 2009

ÉPREUVE DE LANGUE VIVANTE ÉTRANGÈRE

GROUPE 1

ARMÉNIEN

Le candidat indiquera sur sa copie s'il compose en arménien oriental ou en arménien occidental.

Durée : 2 heures

SPECIALITES	Coefficients
Assurance	1
Communication des entreprises	1
Management des unités commerciales	1,5
Professions immobilières	1

L'usage d'un dictionnaire bilingue est autorisé.
L'usage de la calculatrice est interdit.

Dès que le sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Le sujet se compose de 7 pages, numérotées de 1/7 à 7/7.

ARMÉNIEN ORIENTAL

Արդիական հաղորդամիջոցները[1] և գրավոր մամուլը

Բոլոր կարևոր թերթերն ունեն իրենց համացանցային[2] և թվային[3] հրատարակությունը[4]: Կարելի է դրանք կարդալ որևէ ժամանակ, որևէ տեղ: Այնուամենայնիվ մարդիկ շարունակում են գնել տպված թերթը, որ իր տեսակի մեջ անփոխարինելի[5] է:

Իրենց տպաքանակի անկման[6] հակառակ, թերթերը դիմանում են և գտնում են հարատևելու իրենց միջոցները:

Հայկական գրավոր մամուլի կացությունը տարբեր վիճակ է ներկայացնում Սփյուռքի զանազան օջախներում: Մի տեղ խամրում[7] է ու անհետանում, ուրիշ տեղեր իր գոյությունը դժվարությամբ է քաշքշում, իսկ նորաստեղծ գաղութներում որոշ աշխուժության նշաններ է ցույց տալիս:

Բայց ընդհանրապես գրավոր մամուլը պիտի ապրի, որքան էլ ընթերցողը համակարգչի[8] միջոցով լուրերի առատության մեջ լողա: Համացանցով երկար ժամանակ լուրերին հետևելը հոգնեցուցիչ է: Պաստառի վրա երկար ընթերցանությունները ցավեցնում են աչքն ու միտքը:

Մարդ արարածը միշտ կարիք ունի շոշափելի մամուլի, իր մատներով թուղթը զգալու, էջեր դարձնելու, որ ինքնին հաճույք է: Թերթը կարելի է կարդալ բազկաթոռին պառկած, որոշ հեշտանքով[9]:

Գրավոր մամուլը շարունակվելու է ու տևելու: Այս մամուլն ավելի պատասխանատու է իր լրատվության, ուստի և ավելի հավաստի, քան համացանցն իր բյուրավոր[10] հաղորդումներով, ուր շատ լուրեր անստույգ աղբյուրներ ունեն և մեկը մյուսից են քաղված: Մինչդեռ տպված մամուլն ունի լուրերը ստուգելու, հավաստի լինելու պարտականությունը: Հետախուզական[11] լրագրությունը մաս է կազմում պատասխանատվության այդ գիտակցության: Գրավոր մամուլը դիմագիծ ունի, պատասխանատու: Ընթերցողը գիտի, ում շնորհակալություն հայտնել, կամ ում դեմ բողոքել, ումից հաշիվ պահանջել:

«Ցառաջ» օրաթերթ, Փարիզ, 5/01/2008, էջ 2, հատվածներ Գրիգոր Քյոսեյանի հոդվածից:

[214 mots]

---

[1] Հաղորդամիջոց = moyen de communication, média
[2] Համացանց = Internet
[3] Թվային = numérique
[4] Հրատարակություն = édition
[5] Անփոխարինելի = irremplaçable
[6] Անկում = chute
[7] Խամրել = se flétrir
[8] Համակարգիչ = ordinateur
[9] Հեշտանք = volupté
[10] Բյուրավոր = innombrable
[11] Հետախուզական = d'investigation

ARMÉNIEN ORIENTAL

TRAVAIL À FAIRE PAR LA CANDIDAT

COMPREHENSION (Noté sur 10)

Rédigez en français un compte-rendu du texte en mettant en évidence les idées principales (150 mots + ou – 10%).

EXPRESSION (Noté sur 10)

Répondez aux questions suivantes **en arménien**

1. Ներկայացրե՛ք հետևյալ կայքէջը (սայթը) և բացատրեցե՛ք, ինչու այն կարող է օգտակար լինել գործ փնտրողի համար: Եթե դուք գործ փնտրեիք, կնախընտրեիք համացանց՞ից օգտվել, թե գրավոր մամուլ՞ից: Ինչու՞:
(մոտ 150 բառ, + կամ – 10 %).

Emploi.org, recherchez votre emploi sur Internet -

Vous cherchez un emploi ?

Emploi.org vous propose une sélection de sites d'offres d'emplois classés par thème : emplois à l'étranger, travail saisonnier, informatique, droit, santé...

Vous cherchez un stage ?

Vous êtes à la recherche d'offres de stages en France ou à l'étranger? Emploi.org a sélectionné des sites qui satisferont aux demandes les plus variées !

Vous cherchez un petit job ?

Travail saisonnier, mi-temps, job d'appoint, travail à domicile, découvrez les offres des principaux sites spécialisés.

Vous cherchez un annuaire d'entreprise ?

Retrouvez les sites incontournables pour vous aider dans le montage, le financement, la gestion, le développement de votre entreprise.

Source : www.emploi.org/

2. Ձեզ կարևո՞ր է թվում արդիականության մասին (տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական... հարցերում) միշտ տեղյակ լինել՝ ձեր ապագա աշխատանքում ավելի արդյունավետ [efficace] լինելու համար: Արդարացրե՛ք ձեր պատասխանը:
(մոտ 150 բառ, + կամ – 10 %).

ARMÉNIEN OCCIDENTAL

Արդիական հաղորդամիջոցները[12] եւ գրատոր մամուլը

Բոլոր կարեւոր թերթերը ունին իրենց համացանցային[13] եւ թուային[14] հրատարակութիւնը[15]: Կարելի է զանոնք կարդալ որեւէ ատեն, որեւէ տեղ: Այսուհանդերձ մարդիկ կը շարունակեն գնել տպուած թերթը, որ իր տեսակին մէջ անփոխարինելի[16] է:

Հակառակ իրենց տպագրանակի անկումին[17], թերթերը կը տոկան[18] եւ կը գտնեն յարատեւելու իրենց միջոցները:

Հայկական գրատոր մամուլին կացութիւնը տարբեր պատկեր կը պարզէ Սփիւռքի զանազան օջախներուն մէջ: Տեղ մը կը խամրի ու կ'անյայտանայ, ուրիշ տեղեր իր գոյութիւնը դժուարութեամբ կը քաշքշէ, իսկ եռաստեղծ գաղութներուն մէջ որոշ աշխուժութեան նշաններ ցոյց կու տայ:

Բայց ընդհանրապէս գրատոր մամուլը պիտի ապրի, որքան ալ ընթերցողը համակարգիչի[19] միջոցով լուրերու առատութեան մէջ լողայ: Համացանցով լուրերու երկար ժամանակ հետեւիլը յոգնեցուցիչ է: Պաստառին վրայ երկար ընթերցանութիւնները ցաւալի են աչքին եւ մտքին համար:

Մարդ արարածը միշտ պէտք ունի շօշափելի մամուլի, մատներովը թուղթը զգալու, էջեր դարձնելու, որ ինքնին հաճոյք մըն է: Թերթը կարելի է կարդալ բազկաթոռին վրայ երկարած, որոշ հեշտանքով[20]:

Գրատոր մամուլը պիտի շարունակուի եւ տեւէ: Այս մամուլը աւելի պատասխանատու է իր լրատուութեան, ուստի եւ աւելի հաւաստի, քան համացանցը իր բիւրաւոր[21] հաղորդումներով, ուր շատ մը լուրեր անստոյգ աղբիւրներ ունին եւ մէկը միւսէն քաղուած են: Մինչդեռ տպուած մամուլը ունի լուրերը ստուգելու, հաւաստի ըլլալու պարտականութիւնը: Հետախուզական[22] լրագրութիւնը մաս կը կազմէ պատասխանատուութեան այդ գիտակցութեան: Գրատոր մամուլը դիմագիծ ունի, պատասխանատու մը: Ընթերցողը գիտէ որուն շնորհակալութիւն յայտնել, կամ որու դէմ բողոքել, որմէ հաշիւ պահանջել:

«Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 5/01/2008, էջ 2, հատուածներ Գրիգոր Քէօսէեանի յօդուածէն:

[220 mots]

---

[12] Հաղորդամիջոց = moyen de communication, média
[13] Համացանց = internet
[14] Թուային = numérique
[15] Հրատարակութիւն = édition
[16] Անփոխարինելի = irremplaçable
[17] Անկում = chute
[18] Տոկալ = résister
[19] Համակարգիչ = ordinateur
[20] Հեշտանք = volupté
[21] Բիւրաւոր = innombrable
[22] Հետախուզական = d'investigation

ARMÉNIEN OCCIDENTAL

TRAVAIL À FAIRE PAR LA CANDIDAT

COMPREHENSION (Noté sur 10)

Rédigez en français un compte-rendu du texte en mettant en évidence les idées principales (150 mots + ou – 10%).

EXPRESSION (Noté sur 10)

Répondez aux questions suivantes **en arménien**

1. Ներկայացուցէ՛ք հետեւեալ կայքէջը (սայթը) ե բացատրեցէ՛ք ինչու ան կրնայ օգտակար ըլլալ գործ փնտռողին համար։ Եթէ դուք գործ փնտռէիք, արդեօք պիտի նախընտրէիք համացա՞նց գործածել, թէ գրատոր մամու՞լ։ Ինչու՞։
(մօտ 150 բառ, + կամ – 10 %).

Emploi.org, recherchez votre emploi sur **Internet** -

Vous cherchez un emploi ?

Emploi.org vous propose une sélection de sites d'offres d'emplois classés par thème : emplois à l'étranger, travail saisonnier, informatique, droit, santé...

Vous cherchez un stage ?

Vous êtes à la recherche d'offres de stages en France ou à l'étranger? Emploi.org a sélectionné des sites qui satisferont aux demandes les plus variées !

Vous cherchez un petit job ?

Travail saisonnier, mi-temps, job d'appoint, travail à domicile, découvrez les offres des principaux sites spécialisés.

Vous cherchez un annuaire d'entreprise ?

Retrouvez les sites incontournables pour vous aider dans le montage, le financement, la gestion, le développement de votre entreprise.

Source : www.emploi.org/

2. Ձեզի կարեւո՞ր կը թուի արդիականութեան մասին (տնտեսական, ընկերային, արհեստագիտական [technologique]... հարցերուն մէջ) միշտ տեղեակ ըլլալ՝ ձեր ապագայ աշխատանքին մէջ աւելի արդիւնաւետ [efficace] ըլլալու համար: Արդարացուցէք ձեր պատասխանը:
(մօտ 150 բառ, + կամ – 10 %).